

Թիւ 1053
Փետրուար 26, 1960

Մեծայարգ
Տիար Արմէն Գասպաշեան
Ատենադպիր Միսկան Խորհուրդի
Գլխվկէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Պրն. Գասպաշեան,

Ստացած ենք 1960 Փետրուար 17 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը տեղեկացնէք թէ Արժ. Տ. Առնակ ԲՀՆԿ. Գասպարեանի նախագահութեամբ գումարուած Միսկան ժողովին մէջ ընտրուած են Միսկան Խորհուրդի նոր անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներ կը վայելեալ ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով.-

Տիարք՝ Պետրոս Պօղիկեան
Վահան Կարապետեան
Դէնըրտ Արսլանեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք պատուարժան Միսկան Խորհուրդիդ համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւնի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի